ՏԱՐԵՑՆԵՐԻ ՉԱՐԱՇԱՀՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

# 12 Բան Որ Բոլորս Կարող Ենք Անել՝ Կանխելու Տարեցների Չարաշահումը

Մեր համայնքները նման են շենքերի, որոնք օժանդակում են մարդկանց բարեկեցությանը: Հաստատուն շենքերը երաշխավորում են որ մարդիկ ապահով են ու բարգավաճ ցանկացած տարիքում: Մենք բոլորս մեր մասն ունենք շինարարական այս աշխատանքում:



## Ահա 12 բան որ ամեն մարդ կարող է անել հիմնելու համանքային օժանդակ կառույցներ եւ կանխել տարեցների չարաշահումը:

- > **Սովորեք** տարեցների չարաշահման եւ անտեսման նշանները եւ ինչպես դա միասնաբար լուծել:
- > **Խոսեք ընկերների եւ ընտանիքի անդամների հետ** թե ինչպես կարող ենք բոլորս ծերանալ եւ նվազեցնել չարաշահումը ծրագրերով եւ սպասարկություններով՝ ինչպես բարելավված ստիկաննություն, համանքային կենտրոններ, եւ հանրային երթեւեկություն:
- > **Կանխեք մեկուսացումը:** Հաճախ զանգահարեք կամ այցելեք մեր սիրելի տարեցներին եւ հարցրեք թե ինչպես են:
- > **Նամակ ուղարկեք** տեղական թերթերին, ռադիոյի կամ հեռուստատեսության ալիքներին առաջարկելով որ խոսեն Համաշխարհային Տարեցների Չարաշահման Օրվան մասին (Հունիս15) կամ Տատիկների-Պապիկների Օրվան մասին՝ Սեպտեմբերին:
- > **Միացեք Էյջլս Էլայնսին**, մի կազմակերպություն՝ որ միացնում է բոլոր տարիքի կազմակերպություն՝ որ միացնում է բոլոր տարիքի մարդկանց ամբողջ երկրում, որոնք միասնաբար սատարում են տարեցների արժանապատվությունը եւ աշխատում են ձերբազատվել տարեցների չարաշահումից: Այցելեք՝ ՝ Visit agelessalliance.org.
- > **Դադար տվեք** խնամակալներին:
- > **Քաջալերեք մեր դրամատան պատասխանատուներին** որ իրենց աշխատակազմին մարզեն ինչպես որ իրենց աշխատակազմին մարզեն ինչպես հայտնաբերել տարեցների դրամական չարաշահումը:
- > **Խնդրեք մեր բժիշկներին,** որ իրենց բոլոր տարեց հիվանդներին հարցնեն առկա ընտանեկան բռնության մասին նրանց կյանքում:
- > **Կապվեք տեղական Տարեցների Պաշտպանության Սպասարկության կամ Երկարաժամկետ Խնամքի պատասխանատուին** իմանալու ինչպես օժանդակել նրանց աշխատանքը տարեցներին օգնելու եւ հաշմանդամ մեծահասակներին՝ որոնք կարող է ավելի վտանգված լինեն
- > **Կազմակերպեք «Արժանապատվությամբ Ծերանալ» խորագրով գրության կամ նկարչության մրցանակ** տեղական մի դպրոցում:
- > **Խնդրեք կրոնական պատասխանատուներին** որ խոսեն տարեցների չարաշահման մասին պատարաքի ժամանակ կամ դրա մասին տեղեկություն հայթայթեն գրքույկում:
- > **Կամավոր եղեք** լինել ընկերական այցելու՝ մի ծերանոցի բնակիչի կամ մեր համայնքում տանը ապրող մի տարեց անձի:

## Մեր բոլորի պարտականությունն է կանխել եւ խոսել տարեցների չարաշահման մասին:

Տարեցների չարաշահումը կանխելու մասին տեղեկության համար, խնդրեմ այցելեք մեր կայքը՝ ncea.acl.gov.

Այս փաստաթուղթը պատրաստվել է Տարեցների Չարաշահման Պետական Կենտրոնի համար՝ որը գտնվում է USC համալսարանի Քեք Բժշկական Բաժնում, եւ մասամբ հովանավորված է Տարեցների Հարցերի Կառավարչությունից (AOA) ստացված գումարով (No. 90AB0003-01-01), ինչպես նաեւ Միացյալ Նահանգների Առողջապահական եւ Մարդկային Սպասարկությունների Բաժանմունքի (DHHS) կողմից: Բոլոր օժանդակություն ստացողները որոնք պետական հովանավորությամբ կատարում են աշխատանքներ, քաջալերվում են ազատորեն բացահայտել նրանց բացահայտումներն ու եզրակացությունները: Հետեւաբար, այդ տեսակետները եւ կարծիքները անպայման չէ որ ներկայացնում են Տարեցների Հարցերի Կարավարչության եւ DHHS-ի կեցվածքները: Փաստաթուղթի վերջին փոփոխությունը կատարվել է՝ Դեկտեմբեր 2017-ին:

NCEA National Center on Elder Abuse

Keck School of Medicine of USC